ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Ռուզաննա Գաբրիելյան, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության պետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն), 2025 թվականի փետրվարի 5-7-ը:

3. Հրավիրող կողմը.

Open Government Partnership, GIFT

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանդիպման հիմնական նպատակներն էին՝

- **Փորձի փոխանակում՝** բաց կառավարման խթանման լավագույն փորձերի և դասերի քննարկում:
- **Համատեղ բարեփոխումների մշակում՝** համընդհանուր կառավարման մարտահրավերների լուծման ուղիների որոնում:
- **Գործընկերային հարաբերությունների ամրապնդում՝** կառավարությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային կառույցների միջև:

5. «Քննարկված թեմաները.

Աշխատաժողովի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Հանրային մասնակցության խթանում

1. Քաղաքացիական ներգրավվածության նորարարական մոդելների ներկայացում:
2. Օրենսդրական նախաձեռնություններ, որոնք խթանում են կառավարություն-

քաղաքացի երկխոսությունը:

2) Թվային կառավարում և նորարարություն

3. Արհեստական բանականության և թվային գործիքների ներգրավում հանրային ծառայությունների մատուցման մեջ:
4. Կիբերանվտանգության և տվյալների պաշտպանության համակարգերի բարելավում:

3) Կլիմայի փոփոխություն և շրջակա միջավայրի կառավարում

5. Բաց կառավարումը որպես կլիմայի փոփոխության մեղմման գործիք:
6. Տեղեկատվության թափանցիկության խթանում՝ կլիմայական քաղաքականությունների իրականացման գործընթացում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի պատվիրակությունը ակտիվորեն ներգրավված է եղել քննարկումներին՝ ներկայացնելով ՀՀ դիրքորոշումը ֆինանսական թափանցիկության, դատաիրավական բարեփոխումների, տեղական ինքնակառավարման և բնապահպանական քաղաքականությունների ոլորտներում:

Փետրվարի 7-ին ելույթ եմ ունեցել «Ֆինանսական թափանցիկություն և հանրային մասնակցություն» թեմայով քննարկման շրջանակներում և ներկայացրել մասնակցային բյուջետավորման հայաստանյան մոտեցումը:

Քննարկման հիմնական շեշտադրումներն էին՝

1. Հայաստանի հանձնառությունը ֆինանսական թափանցիկությանը

- Ներկայացրեցի Հայաստանի կողմից իրականացվող միջոցառումները բյուջետային գործընթացների թափանցիկության բարձրացման ուղղությամբ:
- Հանրային բաց բյուջեի ստեղծումը և բյուջետային հաշվետվությունների

հրապարակումը:

2. Հանրային մասնակցության մեխանիզմների զարգացում

- Ներկայացրեցի մասնակցային բյուջետավորման մեր նախաձեռնությունները, որոնք քաղաքացիներին հնարավորություն են տալիս ուղղակիորեն ներգրավվել պետական միջոցների բաշխման գործընթացում:

3. Խնդիրներն ու դրանց լուծման ուղիները

- Հանրային ներգրավվածության նվազ մակարդակը հաղթահարելու համար ներդրվում են նոր թվային գործիքներ:
- Քննարկվեց բյուջետային տեղեկատվության հասանելիության ընդլայնման անհրաժեշտությունը:

4. Հետագա քայլեր

- Ծրագրերի մշակման համար տեխնոլոգիական լուծումների ներդրում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

Ստորագրությունը, ամսաթիվը:

17 փետրվարի, 2025թ.